ԳԱԲՈՒԶՅԱՆ ԱՐԱ
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ
GABUZYAN ARA
Doctor of Legal Sciences, Professor,
Head of Chair of Criminal Law of the Yerevan State University
ГАБУЗЯН АРА
доктор юридических наук, профессор,
заведующий кафедрой уголовного права Ереванского государственного университета

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԺԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

PECULIARITIES OF CRIMINAL RESPONSIBILITY AND PUNISHMENT OF JUVENILES*

ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ И НАКАЗАНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ*

Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի հարցերը, կապված անչափահասների սոցիալական, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունների հետ, առանձնահատուկ կարգավորման անհարժեշտություն ունեն: Հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ արտաքին ազդեցությանը դիմագրավելու, ինքնուրույն որոշում կայացնելու անչափահասների ունակությունները խիստ սահմանափակ են[1]: Բացի այդ, անչափահասներին հատուկ է խիստ զգայուն լինելը, ուստի քրեաիրավական ներգործության միջոցները նրանց ավելի լուրջ զրկանքների են ենթարկում: Դրա համար անչափահասների քրեական պատասխանատվությունն ու պատիժը պետք է զգալիորեն ավելի մեղմ լինեն, քան չափահասներինը: Անչափահասների պատժի նպատակներն էլ պետք է որոշակիորեն տարբերվեն չափահասների համար սահմանվող պատժի նպատակներից: Գործող քրեական օրենսգիրքը այս կապակցությամբ որևէ տարբերություն չի սահմանում. պատժի նպատակներ են սոցիալական արդարության վերականգնումը, հանցանք կատարած անձի ուղղումը և հանցագործությունները կանխելը: Սակայն ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նաև Նախագիծ) այլ մոտեցում է դրսևորված: Նախագծով սահմանվում է, որ պատժի ընդհանուր նպատակներից բացի, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատիժը նպատակ է հետապնդում ապահովելու նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը, դաստիարակելու նրան և պաշտպանելու այլ անձի բացասական ազդեցությունից: Կարծում ենք, որ այս ձևակերպումը համապատասխանում է «Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններին (Պեկինյան

* Հոդվածը ներկայացվել է 01.08.2018, գրախոսվել է 15.04.2019, ընդունվել է տպագրության 20.06.2019:
* The article was presented 01.08.2018, was reviewed 15.04.2019, was accepted to publication 20.06.2019.
* Статья представлена 01.08.2018, рецензирована 15.04.2019, принята в печать 20.06.2019.

[1] Տե՛ս Andrew Von Hirsh. Proportionate Sentences for Juveniles. How Different than for Adults? Punishment and Society, April 2001, vol 3, no. 2, էջեր 221-236, Криминология. СПб., 2002, էջ 317:

կանոններ)», որի 5.1-րդ հոդվածում սահմանված է, որ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որպեսզի անչափահաս իրավախախտի նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ նրա առանձնահատկություններին և թե՛ իրավախախտման հանգամանքներին:

Այս կանոնի մեկնաբանության մեջ նշվում է, որ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու առաջին նպատակն անչափահասի բարեհաջողությանը նպաստելն է, ինչը նշանակում է խուսափել զուտ պատժիչ սանկցիաներից: Երկրորդ նպատակը «համաչափության սկզբունքի» ապահովումն է, որը հիմնականում արտահայտվում է արարքին համարժեք հատուցման սկզբունքով: Միևնույն ժամանակ անչափահաս և երիտասարդ իրավախախտների նկատմամբ հակազդեցությունը պետք է հիմնվի ոչ միայն իրավախախտման ծանրության, այլև անձի առանձնահատկությունների վրա (օրինակ՝ սոցիալական կարգավիճակը, դրությունը ընտանիքում և այլն): Բացի այդ, պետք է ուշադրություն դարձնել իրավախախտի կողմից զոհին պատճառած վնասի փոխհատուցման ցանկության, աղջկա կամ տղայի լիարժեք և օգտակար կյանք վարելու կամքին և այլն:

Եթե քննարկենք ՀՀ քրեական գործող օրենսգիրքը, ապա կնկատենք, որ որոշ դեպքերում համահունչ լինելով միջազգային ակտերին, դրա առանձին կարգավորումները, այնուամենայնիվ, չեն համապատասխանում դրանց:

Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 5-րդ բաժնում: ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) հոդված 85-ի առաջին մասի համաձայն՝ անչափահասները քրեական պատասխանատվության են ենթարկվում, և նրանց նկատմամբ պատիժ է նշանակվում քր. օր.-ի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով քր. օր.-ի 5-րդ բաժնում նախատեսված կանոնները: Պատժի նշանակման հետ կապված այս ընդհանուր դրույթն այնուհետև կոնկրետացվում է մի շարք նորմերում: Մասնավորապես, քր. օր.-ի 90-րդ հոդված ի առաջին մասի համաձայն՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը: Ինչպես տեսնում ենք, դատարանը 90-րդ հոդվածի առաջին մասի ուժով անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս պարտավոր է հաշվի առնել մի քանի հանգամանքներ, որոնք, մեր կարծիքով, համահունչ են «Պեկինյան կանոնների» մեջ բերված դրույթներին:

Նախ՝ ընդհանուր բնույթի մեկ նկատառում: Անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ 90-րդ հոդվածում նշված հանգամանքները չեն կարող հաշվի առնվել որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, հակառակ դեպքում կխախտվի քր. օր.-ի 63-րդ հոդվածի երրորդ մասի պահանջը, համաձայն որի՝ պատիժ նշանակելիս դատարանը չի կարող հաշվի առնել նույն հոդվածի առաջին մասով չնախատեսված այլ հանգամանքներ: Այն, որ 90-րդ հոդվածում նշված հանգամանքները չեն կարող հաշվի առնվել որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, երևում է նաև դրանց բովանդակային վերլուծությունից:

Անդրադառնանք 90-րդ հոդվածում նշված կոնկրետ հանգամանքների քննարկմանը:

Առաջին հանգամանքը, որը նշված է քննարկվող հոդվածում, անչափահասի կյանքի և դաստիարակության պայմաններն են: Ակնհայտ է, որ խոսքը նորմալ պայմանների մասին չէ: Պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնվեն այն առանձնահատուկ պայմանները, որոնք որոշակի դեր են կատարել անչափահասի կողմից վարքագծի հանցավոր ձևն ընտրելու մեջ: Այդպիսիք կարող են համարվել ընտանիքի նյութական ծանր վիճակը, ծնողների կողմից անչափահասի

նկատմամբ բռնության գործադրումը, նրա նկատմամբ անտարբերությունը, ծնողների կամ ընտանիքի մյուս չափահաս անդամների հարբեցողությունը, անբարոյական վարքագիծը, ընտանեկան հաճախակի կոնֆլիկտները և այլն[1]: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ չափահասների ազդեցության տակ ընկած, ծնողական հոգատարությունից զրկված, ծնողների կամ խնամակալների կողմից բռնության ենթարկված անչափահասը, ով հանցանք է կատարել, ավելի մեղմ պատժի է արժանի[2]:

Եթե ընդհանրացնելու լինենք քննարկվող հանգամանքի վերլուծությունը, ապա կարելի է նշել, որ 90-րդ հոդվածում նշված «կյանքի և դաստիարակության պայմանները» այն գործոններն են, որոնք բացասաբար են անդրադառնում անչափահասի վրա և էական դեր են կատարում հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում: Պետք է նշել, որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ անչափահասների նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանները հարկ եղած դեպքում հաշվի են առնում քննարկվող հանգամանքը և դատավճռում նշում, որ «պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները», այնուհետև՝ բացահայտում, թե կոնկրետ ինչումն են դրանք դրսևորվել (օրինակ՝ ծնողներն ամուսնալուծված են, ինչը բացասաբար է անդրադարձել երեխայի վրա, կամ մեծացել է առանց հոր, ինչը բացասաբար է անդրադարձել նրա դաստիարակության վրա և այլն): Միևնույն ժամանակ, շատ դեպքերում չի նշվում, թե կոնկրետ ինչ պայմանների մասին է խոսքը: Բացի այդ, նույնիսկ այն դեպքերում, երբ անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները բացահայտվում են, դատավճռում չի նշվում, թե դրանք որպես ինչ են հաշվի առնվում՝ քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնո՞ղ, թե՞ մեղմացնող հանգամանք: Իհարկե, շատ հաճախ դատավճռի ընդհանուր տրամաբանությունից և նշանակված պատժի տեսակից ու չափից, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու որևէ ինստիտուտ կիրառելուց ակնհայտ է դառնում, որ քննարկվող հանգամանքը հաշվի է առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Սակայն, մեր կարծիքով, դատավճռում պետք է անպայման նշվի, թե այս կամ այն հանգամանքը որպես ինչ է հաշվի առնվել, ինչն անհրաժեշտ է դատավճռի հիմնավորվածությունն ապահովելու համար:

Հաջորդ հանգամանքն անչափահասի հոգեկանի զարգացման աստիճանն է: Հոգեկանի զարգացման աստիճան ասելով՝ պետք է հասկանալ անձի մտավոր, կամային և հուզական ոլորտների առանձնահատկությունները: Մասնավորապես, անչափահասի կամային ոլորտին բնորոշ են այնպիսի գործոններ, ինչպիսիք են կամակորությունը, ինքնուրույնության ձգտումը, սեռական հասունացման հետ կապված՝ գրգռման գերակայությունն արգելակման նկատմամբ, վճռականությունը, համարձակությունը և այլն[3]: Ինչ վերաբերում է հուզական ոլորտին, ապա անչափահասներին հաճախ հատուկ են լինում անկայունությունը, էմպաթիայի (ուրիշին ապրումակցելու) բացակայութունը, իմպուլսիվությունը, ընդօրինակելու հակումը, ներշնչվող լինելը և այլն: Իհարկե նշված հանգամանքները կարող են նպաստել վարքագծի հանցավոր ձևի ընտրությանը, ուրիշների ազդեցության տակ ընկնելուն և այլն: Նշված առանձնահատկությունները կոնկրետ անչափահասի մեջ կարող են տարբեր կերպ դրսևորվել, տարբեր աստիճանի ինտենսիվություն ունենալ, ուստի պատիժ նշանակելիս դրանք հաշվի առնելը ևս անհրաժեշտ է:

---

[1] Նշված հանգամանքների հանցածին ազդեցությունը բացահայտված է բազմաթիվ կրիմինալոգիական հետազոտություններով, տե՛ս, օրինակ՝ Антонян Ю.М.., Гульдан В.В. Криминальная патопсихология. М., 1991, Антонян Ю.М. Жестокость в нашей жизни. М., 1996, Кондрятук Л. В. Антропология преступления (микрокриминология). Киев, 2001, Иванов Н.Г. Аномальный субъект преступления. М., 1998 և այլն:

[2] Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. / А.В. Арендаренко и др., М., 1997, էջեր 187-188:

[3] Տե՛ս Ильин Е.П. Психология воли. СПб. 2000, էջեր 173-174:

Հարկ է քննարկել նաև քր. օր.-ի 90-րդ հոդվածում անորոշ ձևակերպում ստացած մյուս հանգամանքը՝ «անձի այլ առանձնահատկություններ»: Ակնհայտ է, որ անձի այլ առանձնահատկությունները կարող են վերաբերել նրա վարքագծին, արժեքային համակարգին, մոտիվացիոն ոլորտին: Ընդ որում, այլ առանձնահատկություններն այնքան լայն են, որ դրանք կարելի է բաժանել երկու մասի՝ առանձնահատկություններ, որոնք կարող են բնորոշ լինել նաև չափահասներին, և առանձնահատկություններ, որոնք, տարիքի հետ կապված, բնորոշ են միայն անչափահասներին կամ հիմնականում անչափահասներին: Առաջին խմբի մեջ կարող են ընդգրկվել, մասնավորապես, անչափահասի վերաբերմունքը ուսման կամ աշխատանքի, հասարակության արժեքային համակարգի, ընկերների, ընդհանրապես շրջապատի նկատմամբ, նրա ընդունակությունն ընկալելու ու յուրացնելու հասարակությունում առկա դրական արժեքները, դիմագրավելու շրջապատի բացասական ազդեցությանը: Երկրորդ խմբի մեջ են մտնում մանկական մոտիվացիայով պայմանավորված առանձնահատկությունները՝ արկածախնդրություն, չարաճճիություն, ամեն գնով ինքնահաստատման ձգտում: Այս խմբի առանձնահատկությունների առկայության հավաստման համար էական նշանակություն ունի անչափահասի տարիքից բխող որոշ հոգեբանական առանձնահատկությունների՝ իմպուլսիվության, ընդօրինակելու հակման, ներշնչելիության, երևակայելու հակվածության դրսևորման աստիճանը[1]:

Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնվեն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խմբի մեջ մտնող հանգամանքները: Մեր կարծիքով, ճիշտ կլիներ օրենքում «անձնային այլ առանձնահատկությունները» ձևակերպումից հետո որոշակիորեն բացել դրանց բովանդակությունը՝ նշելով մի քանիսը: Այսպես, «…անձնային այլ առանձնահատկությունները, մասնավորապես՝ ուսման կամ աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը, կրթություն ստանալու կամ աշխատելու ցանկությունը, պատճառված վնասը հարթելու ցանկությունը, ապագայում օրենքի պահանջներին համապատասխան վարքագիծ դրսևորելու պատրաստակամությունը և այլն»: Կարծում ենք, որ գործող օրենքն այս տեսակետից հստակ չէ: ՈՒստի պատահական չէ, որ անչափահասների նկատմամբ կայացված, մեր կողմից ուսումնասիրված դատավճիռներից և ոչ մեկում չհանդիպեցինք նշում այն մասին, որ դատարանը պատիժ նշանակելիս հաշվի է առել անչափահասի այլ առանձնահատկությունները: Դատավճիռներում չհանդիպեցինք նաև հոգեկանի զարգացման աստիճանը հաշվի առնելու վերաբերյալ որևէ դրույթի: Անձին վերաբերող հանգամանքները, որոնք հաշվի են առնվում դատարանների կողմից՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս ընդհանրապես հաշվի են առնվում ոչ միայն անչափահասի, այլև չափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս (օրինակ՝ դրական է բնութագրվում, մինչև հանցանքի կատարումը արատավորված չի եղել և այլն):

Հաջորդ հանգամանքը, որը պետք է հաշվի առնի դատարանը, անչափահասի վրա այլ անձի ազդեցությունն է:

Այս հանգամանքը հաշվի առնելը, իրոք, շատ կարևոր է, որովհետև ներշնչվող լինելը, ուրիշների ազդեցության տակ ընկնելը անչափահասի տարիքային առանձնահատկություններից են, որոնք հաճախ էական դեր են կատարում անչափահասի հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում: Անչափահասը հաճախ ընդունակ չի լինում համարժեք ընկալելու այլ անձի վարքագծի հոգեբանական բովանդակությունը, այդ վարքագծի քողարկված միտումները: Դրա համար էլ նա հաճախ սխալ և ոչ համարժեք ընդհանրացումներ է կատարում, ընկնում է բացասական ազդեցության տակ: Այլ անձի կոնկրետ արարքը, որը անչափահասի մեջ հիացմունք է առաջացնում, միաժամանակ այդ անձի նկատմամբ կայուն դրական վերաբերմունքի ձևավոր-

[1] Տե՛ս Благов Е.В. Применение специальных начал назначения уголовного наказания. М., 2007, էջ 174:

ման պատճառ է հանդիսանում՝ անկախ տվյալ անձի այլ հատկություններից[1]: Իզուր չէ, որ անչափահասների կողմից ՀՀ-ում կատարվող հանցագործությունների մեջ հասակակիցների ազդեցությունը դեր է կատարում դեպքերի մոտ 70%-ում, իսկ չափահասներինը՝ մոտ 30%-ում:

Այնուամենայնիվ, քր. օր.-ի 90-րդ հոդվածի առաջին մասում առկա ձևակերպումը քննարկման կարիք ունի: Բանն այն է, որ ՌԴ քր. օր.-ի 89-րդ հոդվածի առաջին մասում խոսվում է ոչ թե ընդհանրապես, այլ անձի ազդեցության, այլ տարիքով ավելի մեծ այլ անձի ազդեցության մասին: Հարց է առաջանում՝ արդյո՞ք անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև անչափահասի հասակակիցների, թե միայն տարիքով մեծ անձի ազդեցությունը: Քր. օր.-ի ձևակերպումից բխում է, որ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր այլ անձի ազդեցությունը: Ճի՞շտ է արդյոք հայ օրենսդրի նման մոտեցումը: Հաշվի առնելով անչափահասի հոգեբանական նշված առանձնահատկությունները, նման մոտեցումը ճիշտ է թվում: Անչափահասի ներշնչելիության, ուրիշների ազդեցության տակ ընկնելու և ընդօրինակելու հակվածության բարձր աստիճանը հաշվի առնելով, կարծում ենք, որ նշանակություն չունի, թե անչափահասն ում ազդեցության տակ է եղել հանցանքը կատարելիս: Կարևորն այն է, որ հանցագործության պատճառական մեխանիզմում, անչափահասի կողմից վարքագծի հանցավոր ձևի ընտրության հարցում էական դեր կատարած լինի այլ անձի բացասական ազդեցությունը: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ հաճախ հանցակցությամբ (այդ թվում՝ խմբի կողմից) հանցանքը կատարելու դեպքերում դժվար է լինում հստակ բացահայտել, թե անչափահասներից ով ում ազդեցության տակ է եղել, որովհետև ազդեցությունը երկուստեք է եղել: Նման փոխադարձ ազդեցությունը բնութագրական է անչափահասներին: Կարծում ենք, որ նման դեպքերում ևս քննարկվող հանգամանքը կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ որոշ դեպքերում անչափահասն է բացասական ազդեցություն ունենում չափահասի վրա, ուստի անչափահասի հանցագործության մեջ նաև չափահասի մասնակցությունը չի կարող մեխանիկորեն գնահատվել որպես այլ անձի ազդեցություն անչափահասի վրա: Դրա համար էլ քր. օր.-ի 90-րդ հոդվածում նշված հանգամանքը հաշվի առնելիս դատարանը պետք է հստակ ապացուցի, որ տվյալ անչափահասի կողմից հանցանքի կատարման մեջ էական դեր է կատարել այլ անձի բացասական ազդեցությունը:

Անչափահասների քրեական պատասխանատվության ու պատժի նպատակները ենթադրում են, որ պատժի համակարգը պետք է նպաստի դրանց իրագործմանը: Քննարկենք գործող քրեական օրենսգիրքը այս տեսանկյունից:

Կարծում ենք, որ պատժի համակարգը արդեն իսկ խնդրահարույց է այն իմաստով, որ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս թույլ չի տալիս դատարանին ճկուն մոտեցում դրսևորել: Դատարանները ըստ էության հարկադրված են մեկ տեսակի պատիժ նշանակել անչափահասի նկատմամբ, այն է՝ որոշակի ժամկետով ազատազրկում: Բանն այն է, որ անչափահասների համար նախատեսված մյուս պատիժների օրենսդրական կարգավորումները, հասարակությունում առկա վիճակը դեպքերի մեծ մասում հնարավորություն չեն տալիս դատարանին կիրառելու դրանք: Այսպես, օրինակ, տուգանքը նշանակվում է այն դեպքում, երբ անչափահասը ինքնուրույն վաստակ ունի կամ այնպիսի գույք, որի նկատմամբ կարող է բռնագանձում տարածվել: Հիմնական խնդիրն այն է, որ ՀՀ-ում անչափահասները հիմնականում չունեն ո՛չ աշխատանք, այսինքն՝ ինքնուրույն վաստակ, ո՛չ էլ գույք, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ինչն էլ դատարանին հնարավորություն չի ընձեռում կիրառելու այս պատժատեսակը[2]:

[1] Տե՛ս Бодалева А.А. Восприятие человека человеком. ЛГУ, 1968, էջ 9:

[2] Տե՛ս Ա. Մարգարյան, Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները ՀՀ-ում: Եր., 2017, էջ 186:

Հաջորդ պատժատեսակը հանրային աշխատանքներն են: Քր. օր.-ի 54-րդ հոդվածի համաձայն՝ հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով: Հանրային աշխատանքները նշանակվում են դատապարտյալի դիմումի հիման վրա: Հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները չեն կարող նշանակվել դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց նկատմամբ: Այս պատժատեսակի հետ կապված խնդրահարույց մի քանի գործոն կա: Նախ՝ նման երկար ժամկետով հանրային աշխատանքները, մեր կարծիքով, ոչնչով արդարացված չեն: Սրա հետ կապված ցանկանում ենք նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում հանրային աշխատանքների ժամկետը սահմանվել է վաթսունից երկուհարյուր յոթանասուն ժամ, միաժամանակ նշելով, որ հանրային աշխատանքները հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարումն է, որոնք չեն վտանգում դատապարտյալի ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը: Բացի այդ, անչափահասը նախընտրում է դիմում չներկայացնել հանրային աշխատանքների համար՝ գիտակցելով, որ դատարանը կարող է նաև պատիժը պայմանականորեն չկիրառել, որի դեպքում նախատեսված սահմանափակումների շրջանակն անհամեմատ զիջում է հանրային աշխատանքների դեպքում իր վրա դրվող սահմանափակումների շրջանակին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը կարող է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնել, սակայն դա դատարանի իրավունքն է, ոչ թե պարտականությունը: Գործնականում դատարաններն անչափահասի վրա ոչ մի պարտականություն չեն դնում, նրա հետ վերականգնողական աշխատանքներ չեն իրականացվում, ինչն էլ երեխայի մեջ անպատժելիության զգացում է առաջացնում[1] և նպաստում է ռեցիդիվին: Պատահական չէ, որ մի քանի տարի առաջ մեր կողմից կատարված հետազոտությունների ժամանակ պարզվեց, որ Աբովյան քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անչափահասների կեսի նկատմամբ նախկինում նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել[2]:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այս խնդիրը կարծես թե լուծվել է: Նախ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելը նախատեսվել է ոչ թե որպես դատարանի իրավունք, այլ պարտականություն: Բացի այդ, ընդլայնվել է այդ պարտականությունների շրջանակը: Մասնավորապես, դատարանի կողմից դատապարտյալի վրա դրվող պարտականություններ են՝ 1) մասնակցությունը կրթական և մշակութային ծրագրերին, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը, 2) առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության չլքել Հայաստանի Հանրապետության տարածքը, 3) բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնին երկօրյա ժամկետում հայտնել իր նոր բնակության վայրի հասցեն, 4) ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը, 5) ներգրավվել հանրօգուտ աշխատանքներում, 6) սեռավարակից կամ կյանքի համար վտանգ ներկայացնող այլ վարակից բուժման կուրս անցնելը, 7) տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 187:

[2] Տե՛ս Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում: Եր.: 2010, էջ 58:

կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը, 8) որոշակի վայրեր այցելելու արգելքը, 9) հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:

Հաջորդ պատժատեսակը, որը կարող է նշանակվել անչափահասների նկատմամբ՝ կալանքն է: Կալանքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ՝ 15 օրից 2 ամիս ժամկետով: Մի կողմ թողնենք այն հարցը, թե որքանով է ընդհանրապես արդյունավետ այս պատիժը, իրավաբանական գրականության մեջ սրա հետ կապված իրարամերժ կարծիքներ են առկա: Հիմնական խնդիրը, որը կապված է անչափահասների նկատմամբ այս պատժատեսակը կիրառելու հետ այն է, որ գործող օրենսդրության կարգավորմամբ, այն հակասում է միջազգային մի շարք ակտերի պահանջներին: Մասնավորապես, ՀՀ գործող քրեակատարողական օրենսգրքով կալանքի դատապարտված անչափահասի համար չի նախատեսվում կրթության ապահովումը, ինչը հակասում է «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 77-րդ հոդվածին, «Պեկինյան կանոնների» 26.2-րդ հոդվածին և այլն: Մեկ այլ, մեր կարծիքով ավելի կարևոր խնդիր է այն, որ այս պատժատեսակը կարող է կիրառվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար: Մինչդեռ «Պեկինյան կանոնների» 17.1-րդ հոդվածի համաձայն՝ «...գ) անչափահաս իրավախախտին պետք չէ ազատազրկել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ և ներգործության ուրիշ համապատասխան միջոցների բացակայության դեպքում»: Ակնհայտ է օրինակ, որ ոչ մեծ ծանրության հանցանքն այս հասկացության մեջ չի ընդգրկվում: Ինչ վերաբերում է միջին ծանրության հանցանքին, ապա միգուցե այն կարող է համարվել լուրջ արարք: Պետք է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում կալանք պատժատեսակը, որը վերանվանվել է կարճաժամկետ ազատազրկում, փոքր ինչ այլ կերպ է կանոնակարգված: Այսպես, նախագծում նշվում է, որ կարճաժամկետ ազատազրկումն անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը: Բացի այդ, ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է՝ անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում:

Եվ վերջապես, անչափահասի նկատմամբ նշանակվող հիմնական պատիժն ազատազրկումն է: Վիճակագրական տվյալները վկայում են, որ այս պատժատեսակը կազմում է անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների վաթսուն տոկոսից ավելին (առանձին տարիների այն կազմել է նույնիսկ ութսուն տոկոսից ավելի): Սրա պատճառների մասին արդեն խոսվել է: Սակայն ազատազրկում պատժատեսակի բացասական հետևանքները հաշվի առնելով[1], դատարանները մեծ մասամբ որոշում են կայացնում այն պայմանականորեն չկիրառելու մասին:

Պետք է նշել, որ ազատազրկումը, ըստ գործող քրեական օրենսգրքի, կարող է նշանակվել անչափահասի նկատմամբ յուրաքանչյուր տեսակի հանցագործության դեպքում: Այսպիսով, ինչպես և կալանք պատժատեսակի դեպքում անչափահասի նկատմամբ ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքում ազատազրկում օրենքով նախատեսելը և նշանակելը հակասում է արդեն նշված միջազգային ակտերին: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, մեր կարծիքով շտկել է այս թերությունը: Նախագծում նշվում է, որ անչափահասի ազատազրկումը պատժի բացառիկ միջոց է, որը նշանակվում է միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել

[1] Տե՛ս Чесноков Е. А. Актуальные проблемы применения штрафа в отношении несовершеннолетних, осужденных за имущественные преступления. Юридическая наука и практика. Вестник Нижегородской академии МВД России, Выпуск N 2 (11) / 2009, էջ 179:

պատժի նպատակների իրականացումը: Բացի այդ, նախագծում ամրագրվում է, որ ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության կամ ծանր հանցանք է և զուգորդված չէ բռնությամբ, անչափահասի նկատմամբ ազատազրկում չի նշանակվում: Ընդ որում, եթե քր. օր.-ի հատուկ մասի համապատասխան հոդվածով բացի ազատազրկումից այլ պատիժ նախատեսված չէ, ապա դատարանը նշանակում է պատժի համակարգում առկա ազատությունից զրկելու հետ չկապված ավելի մեղմ պատժատեսակ, որը կիրառելի է անչափահասի նկատմամբ:

Ազատազրկում պատժատեսակի լայն կիրառումը կանխելու նպատակով Նախագծում ավելացվել են անչափահասների նկատմամբ կիրառվելիք ևս երկու պատժատեսակ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և ազատության սահմանափակումը: Վերջինս դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է: Ազատության սահմանափակումը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ վեց ամսից երեք տարի ժամկետով: Դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների, հավաքների կամ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը, կամ որոշակի ժամերի բացակայել տանից: Կարծում ենք, որ այս պատժատեսակը կարող է իրական այլընտրանք լինել ազատազրկմանը:

Մեր կարծիքով՝ անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու ևս մեկ խնդիր է այն, որ տարբեր պատժատեսակների կապակցությամբ գործող քրեական օրենսգրքով հստակ պատժաչափ կամ ժամկետ է նախատեսված, ինչը շատ դեպքերում կարող է հանգեցնել նրան, որ անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել քր. օր.-ի հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն ժամկետը կամ չափը: Օրինակ՝ քրեական օրենսգրքի հոդված 177-ի երրորդ մասով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում առավել ծանրացնող հանգամանքներով կատարված գողության համար, պատիժ է նախատեսված ազատազրկումը՝ չորսից ութ տարի ժամկետով: Սա համարվում է ծանր հանցագործություն: Օրենսգրքի հոդված 89-ի երկրորդ մասի երրորդ կետի համաձայն՝ տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկում: Այսպիսի կարգավորումը, մեր կարծիքով, թույլ չի տալիս անչափահասի և չափահասի նկատմամբ նշանակվող պատիժների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերել: Հարցը կարգավորելու նպատակով ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այլ մոտեցում է դրսևորվել: Նախագծի համաձայն՝ մինչև տասնվեց տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չեն կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի առավելագույն և նվազագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը, իսկ տասնվեցից տասնութ տարին լրացած հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը կրճատվում են մեկ երկրորդով: Նախագծով ամրագրվում է նաև, որ եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ: Կարծում ենք, որ այս մոտեցումը, նախ՝ կապահովի անչափահասի և չափահասի նկատմամբ նշանակվող պատիժների չափի և ժամկետի տարբերակումը, բացի այդ՝ զգալիորեն կմեղմացնի անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժները:

Ինչ վերաբերում է անչափահասների քրեական պատասխանատվության մյուս առանձնահատկություններին, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հարցերին, ապա պետք է նշել, որ չափահասների համեմատությամբ թե՛ գործող օրենսգրքում, թե՛ նախագծում ավելի մեղմ մոտեցում է դրսևորված, ընդ որում՝ նախագծում ավելի մեղմ, քան գործող օրենսգրքում: Մասնավորապես, նախագծում նախատեսվում է, որ եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները, ապա դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է դադարեցնել փորձաշրջանը, բայց ոչ շուտ, քան դրա ժամկետի կեսն անցնելուց հետո:

Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկություններից է նաև այն, որ թե՛ գործող քրեական օրենսգրքում, թե՛ նախագծում նախատեսված է առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով: Գործող քրեական օրենսգրքում նախատեսված են հետևյալ տեսակի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները՝ նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով, պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի կողմից նշված ժամկետում, ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով: Քր. օր.-ի 91-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ: Սակայն, քրեական օրենքում քրեահրավական հետևանքները պետք է որոշակիության հայտնի աստիճանով ձևակերպվեն: Ուստի ճիշտ կլիներ սահմանել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների սպառիչ ցանկ: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը նման մոտեցում է դրսևորել: Բացի այդ, Նախագծով ավելացվել են նոր միջոցներ՝ ուսման անցնելը, ուսումը շարունակելը, հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ հատուկ վերականգնողական կենտրոնում վերականգնողական ծրագրին մասնակցելը: Կարծում ենք, որ խնդրահարույց է նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի (նաև Նախագծի) այն մոտեցումը, համաձայն որի՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելի են միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասների նկատմամբ: Կարծում ենք, որ նման սահմանափակում չպետք է դրվի: Օրինակ՝ ծանր հանցագործություններ են բնակարան ապօրինի մուտք գործելով կատարած գողությունը, առանձնապես խոշոր չափերով գողությունը, կողոպուտը և այլն: Հնարավոր են նման հանցանքների կատարման դեպքեր, երբ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելը արդարացված չլինի: Ուստի, կարծում ենք, որ օրենքը պետք է հնարավորություն տա դատարանին որոշելու այս հարցը: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը պատրաստող աշխատանքային խումբը քննարկում է խնդիրը:

Կցանկանայինք անդրադառնալ ևս մեկ խնդրի: Իրենց հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունների հետ կապված, անչափահասներին հատուկ է խմբով հանցանք կատարելը: Վիճակագրական տվյալների համաձայն՝ խմբի կազմում հանցանք կատարելու դեպքերը կազմում են երեսունից քառասուն տոկոս, թեև վերջին տարիներին որոշակի նվազում է նկատվում: Խմբով գործելու հակվածության պատճառները բազմազան են: Դրանցից կարելի է նշել իր հասակակիցների հետ շփվելու, ինքնահաստատման պահանջմունքները, խմբի կազմում

գործելիս ապահովության, ինքնավստահության, անպատժելիության զգացումը, ներշնչվող, ենթարկվող լինելը և այլն[1]:

Ավանդաբար մեր քրեական օրենսգրքի շատ հոդվածներում հանցանքը խմբի կողմից կատարելը (խոսքը կազմակերպված խմբի մասին չէ) նախատեսված է որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք: Մի կողմ թողնենք այն հարցը, թե ընդհանրապես դա ինչքանով է արդարացված, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ խմբով արարք կատարելը հատուկ է անչափահասին, բխում է նրա տարիքային առանձնահատկություններից և, եթե կարելի է այդպես ասել անչափահասների բնական վիճակն է, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում ամրագրվել է, մեր կարծիքով մի կարևոր դրույթ, համաձայն որի՝ եթե հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի համապատասխան մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, ապա դա չի մեղսագրվում հանցագործության անչափահաս մասնակիցներին:

Կարծում ենք, որ անչափահասների քրեական պատասխանատվությանն ու պատժին վերաբերող նորմերի կատարելագործումը կարող է նպաստել նրանց հանցավոր վարքագծի, հատկապես՝ ռեցիդիվի կանխարգելմանը:

Annotation. Some issues, related to juvenile criminal responsibility and punishment, have been discussed in the article. Based on the research, the author points out some gaps and inaccuracies in the Criminal Code of the Republic of Armenia concerning juvenile criminal responsibility and punishment. Recommendations, based on the research, were made to improve the Criminal Code of the Republic of Armenia.

Аннотация. В статье обсуждаются некоторые вопросы, связанные с особенностями уголовной ответственности и наказания несовершеннолетних. Исследования автора показывают, что по вопросам уголовной ответственности и наказания несовершеннолетних в действующем законодательстве есть некоторые пробелы и недостатки. На основе исследования автор выносит предложения для усовершенствования уголовного законодательства РА.

Հիմնաբառեր՝ անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկություններ, պատիժ նշանակել, «Պեկինյան կանոններ»:

Key words: Peculiarities of criminal responsibility and punishment of juveniles, sentencing, “Beijing rules”.

Ключевые слова: особенности уголовной ответственности и наказания несовершеннолетних, назначение наказания, «Пекинские правила».

[1] Տե՛ս Аванесов Г. А. 10 глав о мотивации и мотивах. Через призму науки криминологии. М., 2012, էջ 96, Криминология: учебник / под ред. В. Д. Малкова, 2-е изд., М., 2006, էջ 131: